ՄԱՅԻՍԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության մայիս ամսվա անցուդարձի մասին:

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում»

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որի հիմնական նպատակն էր բաց երիտասարդական աշխատանքով կամ դրան բնորոշ բաղադրիչներ պարունակող երիտասարդական աշխատանքով զբաղվող կառույցների ներկայացուցիչների հետ քննարկել Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ցանցի ձևավորման հնարավորություններն ու ձևաչափերը՝ հիմնվելով տեղական և միջազգային լավագույն փորձի վրա:

Բացի այդ, շարունակվում են հանդիպումները Հայաստանում երիտասարդների կրթության, զբաղվածության և սոցիալական հարցերով զբաղվող պետական գերատեսչությունների, տեղական ու մարզային իշխանությունների ներկայացուցիչների հետ, ո որոնց ընթացքում ներկայացվում են ծրագրի շրջանակներում իրականացված Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի առկ ա վիճակի և զարգացման նախադրյալների ուսումնասիրությունը, որի արդյունքների հիման վրա պատրաստվել է ԲԵԱ մոդելի ներդրման առաջարկների փաթեթը:

«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագիր

Մայիսի 5-ից 6-ը անցկացվեց Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում իրականացվող «BootCamp» համայնքային երիտասարդական ծրագրերի ներկայացման երկօրյա հանդիպումը:

Շիրակի և Լոռու մարզերից 47 պատանի շարունակեցին աշխատել իրենց ծրագրային գաղափարների վրա: Պատանիները այնուհետև ժյուրիի գնահատմանը ներկայացրին 10 ծրագրային գաղափար, որոնցից 5-ն անցնելով հաջորդ փուլ՝ ստացան ֆինանսավորում:

Իսկ մայիսի 12-ին այդ 5 ծրագրի թիմների համար անցակցվեց «Ծրագրերի կառավարում» թեմայով դասընթացը: Դասընթացի նպատակն էր ձեռք բերել կառավարման վերաբերյալ գործիքներ ու հմտություններ իրենց ծրագրային գաղափարները կյանքի կոչելու համար:

Ճանապարհային անվտանգության շաբաթ

«ՄԱԿ-ի ճանապարհային անվտանգության համաշխարհային շաբաթ-Հայաստանի» շրջանակներում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ «Ճանապարհային երթևեկության անվտանգության իրազեկում» դասընթացը:

Դասընթացի արդյունքում 70 դեռահաս հնարավորություն ունեցավ բարձրացնել ճանապարհային երթևեկության կանոնների և նշանների վերաբերյալ իրենց գիտելիքները և իրավագիտակցության մակարդակը:

*Ծրագիրն իրականացնում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Եվրոպայի օրը Գյումրիում

Մայիսի 19-ին «Ճանապարհ դեպի Եվրոպա» խորագրի ներքո Գյումրին տոնում էր Եվրոպայի օրը:

Տոնակատարության մեկնարկը տրվեց կազմակերպությունների տոնավաճառով, որին ներկա գտնվող կազմակերպություններից մեկն էր ԵՆԿ-ն՝ իր ծրագրերի մասին պատմող տեղեկատվական և գունեղ տաղավարով:

Միջոցառմանը ներկա էին նաև Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը և Հայաստանում Եվրոպական միության դեսպան Պյոտր Սվիտալսկին, ովքեր մեծ հետաքրքրությամբ ծանոթացան կազմակերպությունների ծրագրերին:

«Get a bike, Get a life» ծրագիր

Եվրոպայի օրվան նվիրված կազմակերպությունների տոնավաճառին ներկայացված էր նաև ԵՆԿ-ի "Get a bike, get a life" սոցիալական ձեռնարկատիրության ծրագիրը, որը այցելուներին հնարավորություն էր տալիս մի քանի րոպե հեծանիվով անվճար երթևեկել Եվրոպայի հրապարակում: Միաժամանակ ԵՆԿ-ի կամավոր հեծանվորդները հետաքրքրված այցելու երեխաներին և երիտասարդներին սովորեցնում էին հեծանիվ վարել: Նշենք, որ նման հնարավորություն առաջիկայում ԵՆԿ-ն պարբերաբար ստեղծելու է մեր համաքաղաքացիների համար:

*«Get a bike, get a life» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի «ՔՀ Կամուրջ» ծրագրի շրջանակներում:

Եվրոպական կամավորական աշխատանք

Ուրախ ենք տեղեկացնել, որ «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի շրջանակներում Արմինե Խուդոյանը սկսել է իր կամավորական աշխատանքը Լեհաստանի Կլոձկո քաղաքում գործող «Europejskie Forum Mlodziezy» հասարակական կազմակերպությունում, իսկ Լյուդմիլա Քոչարյանը՝ Սեպոլնո-Կրաժենսկի քաղաքում գործող «Stowarzyszenie “Dorośli- Dzieciom” » հասարակական կազմակերպությունում:

Տվյալ համայնքներում նրանք իրականացնում են երիտասարդական աշխատանք տեղի երիտասարդների համար: Կազմակերպում են տարբեր թեմաներով դասընթացներ, ժամանցային, մշակութային և սոցիալական միջոցառումներ:

Շարժունակությունը ԵՆԿ-ի հետ

Այս ամսվա ընթացքում ունեցել ենք 2 ծրագրի հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում: Դրանցից մեկը «Cultu(Ru)ral Challenge» խորագիրը կրող երիտասարդական միջազգային փոխանակման ծրագիրն է միջմշակութային երկխոսության և համերաշխության թեմայով, որը տեղի է ունենալու Խորվաթիայում սեպտեմբերի 2-ից 9-ը: Իսկ մյուսը մարդու իրավունքների կրթության թեմայով միջազգային դասընթացն է, որը կայանալու է հունիսի 17-ից 25-ը Վրաստանում:

mobility with Y!C
Learn
Develop
Have fun
See the world

Անգլերենի ակումբներ

Այս ամսվա ընթացքում ավարտվեցին անգլերենի 1 սկսնակ և 2 միջին մակարդակի վեցամսյա տևողությամբ ակումբները: Ակումբների վերջին հանդիպումների ընթացքում մասնակիցները կիսվեցին իրենց տպավորություններով ու ձեռքբերումներով, ինչպես նաև պարգևատրվեցին վկայականներով:

Շատ շուտով սկսելու ենք նոր ակումբները:

Արշավ ԵՆԿ-ի հետ

Մայիսի 26-ին տեղի ունեցավ ԵՆԿ-ի կազմակերպած հերթական ճանաչողական արշավը:
ԵՆԿ արշավականները իրենց ճանաչողական այցերը սկսեցին Ռաբաթի ամրոցից: Հաջորդ կանգառը կապուտաչյա Փարվանա լիճն էր, որին հաջորդեց տպավորիչ Վարձիա քարանձավը, իսկ վերջին կանգառը Խերթվիսի բերդն էր:

Սպասեք արկածային նոր արշավների:

Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոն

Հայաստանում «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» տեղեկատվական կենտրոնը Թալինում կազմակերպեց տեղեկատվական հանդիպում, որին մասնակցում էին ավելի քան 60 երիտասարդ:
Հանդիպման ընթացքում Տեղեկատվական կենտրոնի ծրագրի համակարգող Մարիամ Ղարագյոզյանը ներկայացեց Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի կողմից ընձեռվող կրթական ու վերպատրաստման հնարավորությունները :
Հանդիպման ավարտին մասնակիցները հնարավորություն ունեցան նաև ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

Այս ամիս տեղեկատվական կենտրոնը մասնակցեց նաև Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի կողմից կազմակերպված «GTC for Gyumri» ցուցահանդես-Էքսպոյին:

Մայիսի 27-31 Չեխիայում տեղի ունեցավ «Եվրոպական համերաշխության կորպուս» (ԵՀԿ) ծրագրի Որակի հավաստագրման փորձագետների եռօրյա միջազգային հանդիպումը, որին Հայաստանը ներկայացնում էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ, ԵՀԿ Որակի հավաստագրման փորձագետ Արթուր Նաջարյանը:

Հանդիպման նպատակն էր ներկայացնել ծրագրի 2020-2027 թվականների շարունակականության, ծրագրում տեղ գտած փոփոխությունների մասին, Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերը, ինչպես նաև կազմակերպությունների կողմից ԵՀԿ Որակի հավաստագրի ձեռքբերման ընթացակարգերը:

Հանդիպման ընթացքում խիստ կարևորվել է «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնների դերը և աջակցությունը կազմակերպություններին՝ Որակի հավաստագրերի ձեռքբերման և որակյալ ծրագրերի իրականացման հարցում:

Ուրբաթօրյա Սրճարան

Ամիսը ավարտվեց հերթական «Ուրբաթօրյա սրճարան»-ով: Սրճարանի թեման այս անգամ պոեզիան էր՝ լի բնության ու արվեստի շնչով:
«Ուրբաթօրյա սրճարանին» հատուկ ջերմ մթնոլորտում մասնակիցները ներկայացրին ինչպես իրենց հեղինակային, այնպես էլ հայտնի ստեղծագործողների գործերը, իսկ Եվրոպական կամավորական ծառայության կամավորները պատմեցին Հայաստանում իրենց հետ կատարված արկածային դեպքերի մասին:
ԵԿԾ կամավոր Մարտինա Հորնիչկովան ներկաների հետ կիսվեց յոգայի ու մեդիտացիայի գաղտնիքներով:

Մայիսը «Երիտասարդների տանը»

Մայիսը «Երիտասարդների տան» պատանիների համար ևս հաղթական էր և լի հաջողություններով:

«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «BootCamp» համայնքային երիտասարդական ծրագրերի ներկայացում-մրցույթը, որտեղ «Երիտասարդների տան» թիմը, ներկայացնելով **«Համայնքը մեր ձեռքերով» ծրագրային գաղափարը**, ճանաչվեց 5 լավագույններից մեկը:
Կենտրոնում շարունակվում են թեմատիկ շաբաթները:

«European Youth Week»-ի շրջանակներում «Երիտասարդների տունը» կազմակերպեց տեղեկատվական հանդիպում, որին մասնակցում էին կենտրոնի շահառուները: Հանդիպման ընթացքում ԵՆԿ ՀԿ ծրագրի ղեկավար Մարիամ Ղարագյոզյանի կողմից ներկայացվեց Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի կողմից հայ երիտասարդներին ընձեռվող կրթական ու վերպատրաստման հնարավորությունները:

Պատանիները նաև մասնակցեցին ԵԿԾ կամավորների կողմից անցկացվող **«Միջմշակութային արժեքներ»** միջոցառմանը: Իսկ **Թունիսում** կայացած երիտասարդական փոխանակման ծրագրի մասնակիցները կենտրոնի մյուս սաների հետ կիսվեցին իրենց փորձով ու տպավորություններով:

Ճանաչողական այցով կենտրոնի պատանիներն եղան Բեռլին Արտ հոթելում, որտեղ հանդիպում-զրույց ունեցան Շիրակի և Լոռու մարզերում Գերմանիայի դաշնության պատվո հյուպատոս Ալեքսան Տեր-Մինասյանի հետ:

Այնուհետև կազմակերպվեց թանգարանային շաբաթ: **Թանգարանների միջազգային օրվա** շրջանակներում պատանիները կենտրոնի աշխատակազմի ուղեկցությամբ այցելեցին Գյումրիում գործող թանգարաններ:

«Երիտասարդների տուն» ուսումնաճանաչողական այցի ժամանակ կենտրոնի գործունեությանը և Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանն ու զարգացման հեռանկարներին ծանոթացան ՇՊՀ «Սոցիալական աշխատանք» բաժնի ուսանող-պրակտիկանտների խումբը, որից հետո պրակտիկանտները կենտրոնի պատանիների համար կրթական խաղեր կազմակերպեցին:

Կենտրոնն ակտիվորեն մասնակցում է հանրային տարբեր միջոցառումների: «Երիտասարդների տան» աշխատակիցներն ու պատանիները մայիսի 15-ին Գյումրիի թատերական հրապարակում մասնակցեցին Շիրակի մարզպետարանի նախաձեռնած **«Ընտանիքի միջազգային օրվան»** նվիրված հանրային միջոցառումներին՝ իրենց ձեռքերով պատրաստած պաստառներով, որոնք կրում էին օրվա խորհրդը:

«Երիտասարդների տան» պատանիները մասնակցեցին **Եվրոպայի օրվան** նվիրված միջոցառումներին: Կենտրոնի պատանիները «Get a bike, get a life» սոցիալական ձեռնարկատիրության ծրագրի շրջանակներում հեծանվային արշավ իրականացրին Գյումրու Ամի թաղամասից մինչև Սև բերդ ամրոց, որտեղ պատանի հեծանվորդները այցելուներին տեղում սովորեցրին հեծանիվ վարել:

«Արդարադատությունը երեխաների աչքերով» թեմայով մարզային զրույց-քննարկումներից մեկը տեղի ունեցավ «Երիտասարդների տան» պատանիների հետ, որին հաջորդեց հանրային քննարկման մասնակցությունը Երևանում:

«GOALS Հայաստանի» և ԵՆԿ-ի համագործակցության շրջանակներում «Երիտասարդների տանը» մայիսի 29-ից մեկնարկեց երկամսյա մարզումների ակումբը :

«Երիտասարդների տան» պատանիների ժամանցն ապահովվեց **«Ուրբաթօրյա սրճարանի»** մասնակցությամբ, ինչպես նաև **հունիսի մեկին** նվիրված միջոցառման նախապատրաստական աշխատանքների ներգրավվածությամբ: